

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՐԵԿԱՑՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Այս միանգամայն ճշմարտացի նկարագրութիւնը (որը տեսանելի պատկեր է ստեղծում) չափազանց հետաքրքրական է որոշ կողմերով: Այստեղ ոչ միայն լուի՝ իբրև միջատի բնական, ոչ ճոռումբան նկարագիրն է տրուած, այլև, եթէ կարելի է այսպէս ասել, բանաստեղծի որակում-գնահատականը: Պատկերի իրական բնոյթը հէնց շատ բանով պայմանաւորուած է այդ որակումով, որովհետև զրա մէջ ճիշդ կերպով արտացոլում են նաև բանաստեղծի հասարակական տրամադրութիւնները: Եւ իրօք, որքան ցայտուն է երևան գալիս նրա ատելութիւնը օտար զաւթիչների նկատմամբ, երբ լուերին, իբրև չափազանց զարշիւ միջատների, համեմատում է արաքական վայրագ զօրքերի հետ (ս. . . և գազանութեամբ քանասար գալոց արաքացւոց): Նարեկում բազմաթիւ են և այնպիսի դէպքեր, երբ բանաստեղծը չի խորշում անելու բացայայտ նատուրալիստական նկարագրութիւններ և արտայայտութիւններ (ճիւճուների և որդերի մասին, և այլն):

Բանաստեղծական արտայայտիչ փոխաբերութիւնները և համեմատութիւնները նարեկում մեծ տեղ են բռնում. զրանց առանձնայատուկ կողմերից մէկն այն է, որ երբ որևէ հոգեվիճակի ցուցադրման համար վերցւում է իրական աշխարհից որևէ օրինակ, այդ օրինակը երբեմն այնպիսի մանրամասնելով է նկարագրուում, որ նոյն իսկ տուեալ հոգեվիճակից անջատ վերցրած ինքնուրոյնարար կարող է իրենից գեղարուեստական մի ամբողջութիւն կազմել: Իբր բնորոշ փաստ բերենք նաւարեկութեան նշանաւոր պատկերը: Այս կեանքի պարագաները ծփանում ծովի նմանութիւն ունեն, ասում է նարեկացին, և մարդու հոգին իր մարմնեղէն նաւակով աշխարհի ծովի մէջ անդադար խուժող անթիւ կոհակներից միշտ տարուբերում է: Բանաստեղծին երբեմն թւում է, թէ այդ անհանգիստ ծովում

խորտակում է իր հոգին այնպէս, ինչպէս խորտակում է յանկարծակի մեծ փոթորկի հանդիպած նաւը:

Գանգի մինչդեռ չուէի ես յանձնգութեան անհարակոյսն վսահութեամբ,
Դոյզն կասկած արկածից ի միս բերելով առ խոց փոք միջոցին,
Որ ի մէջ հանգստեանն եւ աշխատութեանն,
Իբր այն քե հասեալ իցեմ,
Ձմեռն յամաւանի բաբեր հողմով ժամանեալ
Ներհալեանն դիմակցութեամբ ամբոխեաց
գնանգարսուքիւնն:
Ուստի նաւն ի բախմանէ վայրենի ալեացն
խորտակեցաւ:
Թեւոցն ձեռնարկութիւն փայլայեցաւ,
Կայմն ամբարձման ի կայից իւրոց խլեցաւ,
Առագասին բոշարան յանկարկասելի ծուկնս
պատառեցաւ,

Շինուածոյն շուք անգարդեցաւ,
Առասանք ձգողականացն խզեցաւ,
Տեսարան զլիսոյն դիակի խոնարհեցաւ,
Ապաւանդակին պարան կտրեցաւ,
Ապաւինութեան խաբխիսն լուծաւ,
Լուծք ասուարք ամոլիցն կցորդութեան բա-
ժանեցան,

Սամիք ուղղչացն հետց գալարեցան,
Լասս հիման հասարանի բնկղմեցաւ,
Ղեկացն կառուցմունք անդրէն սուզան,
Չուոցն յարմարութիւնք պակասեցան,
Ողնափայտին պատապարան իսկոյն բեկաւ,
Կապարանք զրսին հասուածոյ յօժաեցաւ,
Դոգք ամփոփման ծոցոյն կազմածոյ անար-
գեցան,

Խել շքանցն եզերաց խախտալ ուսեաւ,
Պաղպաղունք բազմականացն անկեալ բար-
ձաւ,

Վանդակապատին վայելչութիւն յասկեցաւ,
Գահաւորակին հանգստարանն շփոթեցաւ,
Մածմունքն աշխատաւորք ի միաբանութեանց
միմեանց անջատեցան,
Հեղոյսք պնդման բեւեռացն փառեցան:
Արգասիք իրին յիշատակարան ողբոց ինձ
նմանեցաւ:

Նաւուղիկն հանդեպ նաւին դեղերեալ ողբայ,
Ձեռն ի ձեռքին եղեալ՝ արատուաց գեսս
իջուցանէ:

(Բան ԻԵ. — Բ.)

Արանից աւելի արտայայտիչ ու զեղեցիկ ի՞նչ կարող է լինել՝ բանաստեղծն այնպէս է իր խորտակուած հոգու հանդէպ, ինչպէս նաւուղիդը իր խորտակուած նաւի հանդէպ, որը զիգերում է ծովափին ու զխելով փրփրադէպ կոհակներն փրայ ցըրուած նաւի բեկորները ողբում և ձեռքը ծնօտին՝ արտասուքի զետեր է իջեցնում:

Եթէ մէկը փորձէր յատկապէս նաւաբեկութեան մի տեսարան նկարագրել, միևնոյն է, սրանից աւելին չէր կարող ասել: Նարեկացին ինքը ամէն ինչ տեսնում է իրրե պատկեր և այդպէս էլ տեսնում է ընթերցողին: Նա հանդէս է բերում իր ահադին ծանօթութիւնը տուեալ իրական առարկայի նկատմամբ՝ ապացուցելով իր՝ իրրե փրածնութեան ժամանակաշրջանի մարդու արժանիքները: Նրա մօտ այնպէս սերտ են կապում իրար հետ մարդու ներքինը և այն զրոնորող՝ մարդուն չըջապատող արտաքին աշխարհից վերցուած պատկերները, որ ստացում է մի սքանչելի երաժշտական ներդաշնակութիւն. այդ ներդաշնակութիւնը կազմող մասերը այնպէս ամուր են միահիւստուած իրար հետ, որ թւում է, թէ բնականից այդպէս էլ գոյացել են:

Այս առումով առանձնապէս աչքի են ընկնում նարեկացու փոխաբերութիւնները, որոնք պոէմում անթիւ ու անհամար են, պոէտիկական տեսակէտից միշտ ճաշակաւոր, համարձակ ու ինքնատիպ: Ազդակի կարելի է ասել, որ բանաստեղծի համար մի տեսակ օրգանական անհրաժեշտութիւն է հանդիսացել փոխաբերութիւններին զիմելը, միշտ իրականութիւնից վերցուած որեւէ պատկեր - փոխաբերութեամբ իր մասին խօսելը, իր խոհերն ու զգացմունքներն արտայայտելը: Բերենք մի քանի նմուշներ:

Անկաւ սիւնի կուսուրեան տնձինս մաքուրեան:

(Բան ԶԳ. — Գ.)

Մի եղեց անպսուղ ի փոքր վասակոյս՝
Իբր ապաշան սերմանող անբերի երկրի:

(Բան Բ. — Բ.)

Մի ցացես ինձ արգանդ արժի անորդի՝ իբր
Իսրայէլի,
Եւ սիւնս աչաց ցամաքեալ՝ ով ամենագութ:

(Բան Բ. — Բ.)

Արեւոք տեսի՞ց զբիւրակործան վնասեցեալս
տնօր կազմեցեալ:

Իցի՞րէ տեսնեմ պատուեման աչացս իմաստից
զմութեան պարսուցս իմոց պատանեալ...
Երէ լինիցի՞ խաւարասունդս մրացելոյ ծագման առատօ:

Երէ հասցի՞ տեսանել զսպանապալս մօտաւ
սառոյց յեղանակս զարման մօտ:
Երէ տեսի՞ց զցօղ տնձերեղն կանաչացուցանող հոգւոց ինձ արօտ:

(Բան ԻԵ. — Գ.)

Այս նոյն բանը կարելի է ասել նաև նարեկում գործածուած բանաստեղծական էպիտեաների բնոյթի մասին: Դեռ մի կողմ թողած այն զէպքերը, երբ ինքը բանաստեղծն իրեն զանազան էպիտեաներով որակում էր (Բան Գ. — Բ.), այլև նոյնիսկ այն ժամանակ, երբ նա ներքուքում է Աստուծոյ կամ Քրիստոսին, այնպիսի կրօնա-փերացական յատկութիւններ ցոյց տուող էպիտեաների հետ միասին, ինչպէս օրինակ՝ «Ինքնաբուն բարի», «ամենից տիրող հաւատարապէս», «անմերձեալ», «անըմբռնելի», «անխմանալի», «անճառելի», «անտեսանելի», «անզննելի», «անչօլափելի», «անորոնելի», «անսկիզբ», «աներկեան տեսութիւն», «ճշմարիտ էականութիւն», և այլն (Բան Գ. — Բ.), յաճախ հանդիպում են նաև այնպիսի էպիտեաներ, որոնք որեւէ իրական հասարակական հասկացողութիւն արտայայտելով կամ բնութեան որեւէ օրինակ տալով՝ որակումներ կոնկրետ, շօշափելի պատկերներ են ստեղծում: Ինչպէս օրինակ՝ «ամենափայլ ճառագայթ», «անապական անձրև», «արփիացնցող ցօղ», «աղքատասէր պաշտպան», «աննահանջելի հրաման», «աներկբայ խոստում», «անգայթակղելի ելք», «անխարդախ ընթացք», «աննկեղելի խրատ», «անխարդախ պատիւ» (Բան Գ. — Բ.), «պարիսպ ամրութեան», «պատուար պահպանութեան» (Բան ԶԳ. — Բ.), և այլն:

Հոգեկան ապրումները շրջապատող իրականությունից վերցրած պատկերներով արտայայտելը ժողովրդական բանահյուսության յատուկ գծերից մեկն է. անկասկած նարեկացին մեր գրականության մեջ իր պոէտիկական նորամուծությունները կատարել է հայ ժողովրդական բանահյուսության հիման վրայ: Դեռ առկա, նա իր «Մատենան Ողբերգության» պոեմի տեսակը ստեղծել է, ճիշդ է, մի կողմից նախորդ եկեղեցական բանաստեղծության կուլտուրան օգտագործելով, բայց մյուս կողմից առկա խոշոր չափով օգտագործել է ժողովրդական բանահյուսությունը, որով նաև պայմանաւորուել է այդ պոեմի ազգային ինքնատիպ ձևը:

Նարեկացին ժողովրդական բանահյուսության կուլտուրան շատ առկա լայն չափերով է օգտագործել, այդ բանը արդեն նշուեց համեմատությունների և փոխաբերությունների մասին խոսելիս. այժմ այս կապակցությամբ՝ բոլորին պէտք է առնչեցնել նրա պատկերաւորման արուեստի ևս մի քանի կողմեր: Դրանք են բառերի և արտայայտությունների կուտակումները, որոշ տեսակի կրկնություններն ու չափազանցությունները և հակադրությունները:

Նարեկացին մի որևէ ապրում, խոհ և զգացմունք արտայայտելու համար սովորաբար չի բաւարարւում մի փոխաբերությամբ, մի էպիտետով կամ մի ասացուածքով, այլ իրար վրայ կուտակում է նոյնմաստ կամ մօտիկ իմաստով բաւական մեծ քանակությամբ այդպիսի կենդանագրման միջոցներ: Նրա ստեղծագործության պոէտիկական այս առանձնայատկությունը չի կարելի դիտել որպէս ոճի հետադարձ ձևապաշտական զարդարանք: Եթէ տաղերի և ներբողների որոշ մասի մէջ կարելի է ձևապաշտական տարրեր ցոյց տալ, ապա նարեկում նման բան նկատելը սխալ կը լինէր: Այստեղ բանաստեղծի ապրումները և ստեղծագործական շունչը լիովին ներգաշնակում են իրար. որքան մեծ ու հուժկու է առաջինը, նոյնքան մեծ ու հուժկու է երկրորդը. հետևաբար արտայայտական անսովոր չափերի հասնող կուտակումները անմիջական արդիւնք են անսովոր ուժի հասնող իրենց յուզական բովանդակության:

Եւ իրօք, եթէ օրինակ՝ բանաստեղծին սարսափեցնում է մօտալուտ ծերութեան պատկերը, որի առաջ նա բուռն ողբերգություն է ապրում, ի՞նչպէս կարող էր նա այդքան մարդկային ու բնական մի հոգեվիճակ զսպել մի քանի արտայայտությունների մէջ և չափովել:

Մի բոլոցես զկարուքիւնս,
Մի անարգեք զալիսն,
Մի կորացուցես զկործանեալն,
Մի զիջուցես զկեալն,
Մի վայրաբերեք զխոնարհեալն,
Մի ընչման հողմոյ մասնեք զառկայծեալն...

(Բան 21. — Գ.)

Բացի այն, որ այս և շարունակություն կազմող էլի շատ տողեր արտայայտում են մի հիմնական մտտի, կան և այդ հիմնականի մի մասը ներկայացնող համարեա նոյն իմաստն արտայայտող տողերի կուտակումներ (մի կործանուածը կորացնի, մի կքածը ծոխ, մի խոնարհուածը վայրահակի), որոնք ոչ թէ թուլացնում, այլ ուժեղացնում են գեղարուեստական տպաւորությունը:

Եթէ նա, օրինակ, չափազանց ծանր ու ողբերգական է համարում մարդու համար այնպիսի դրութիւն, երբ մի բան է ուզում կատարել, բայց չի կարողանում, երբ մի բանի է ձգտում, բայց նրան չի հասնում, ի՞նչպէս կարող էր չբացագանչել՝

Մի լիցի՝ ինձ երկնել եւ ոչ ծնանել,
Ողբալ եւ ոչ արտաւել,
Խորհել եւ ոչ հառաչել,
Ամպել եւ ոչ անձրեւել,
Ընթանալ եւ ոչ հասանել...

(Բան Բ. — Բ.)

Այստեղ թէպէտ ամէն մի տող մի առանձին փոխաբերության պատկեր է, բայց բոլորն էլ նոյն իմաստն են արտայայտում. նոյնիմաստ փոխաբերությունների այսպիսի կուտակումը սքանչելի կերպով օժանդակում է բանաստեղծի ապրումների լիակատար բացայայտմանը:

Եթէ նարեկացին, օրինակ, ուզում է ցոյց տալ այն խիստ թախիծը, որի մէջ գտնւում է ինքը իր գերագոյն ձգտման՝

Աստու էութեան հետ միանալու ճանապարհից խոտորում լինելու պատճառով և ուզում է ցոյց տալ, թէ դրանով ինքը ինչ մեծագոյն երջանկութիւնից է զրկուել, բնականաբար անհնար կը լինէր կորցրած երջանկութեան մեծութեան մասին պահար տալ մի կամ մի քանի արտայայտութիւններով: զրա համար հեղեղ էր պէտք որը չի ուշանում:

Եւ արդ որո՞ց խնդրոց արժանաւոր վարկանելով զիս մասչիմ աղետել, Արքայութեան յորմէ վրիպեցայ, Երէ փառա՞ցդ վայելչութիւն յորմէ զրկեցայ, Թէ ընդ կենսո՞ցդ անմահականաց յորմէ հեւեցայ, Թէ ընդ հեռեա՞կան պարակցութեան յորոց նեղեցայ, Թէ ո՞ւր որոյն կենդանոյ յորմէ քանցեցայ, Թէ ո՞ստ սնկոյն բերկրութեան յորմէ զօսացայ, Թէ ծաղի՞կ փառացն շնորհի յորմէ քափեցայ, Թէ պանծանա՞ցն ժառանգաւոր յորմէ կորացայ, Թէ հայրենի՞ք ծոցոյն հարազատ յորմէ ընկեցայ ...

(Քան ԻԳ. — Ա.)

Նարեկացին այսպէս է և երջանկութեան պայծառ հեռանկարի և ակնկալութեան պահերին, երբ ցանկանում է գալիքի զեղեցկութիւնը՝ մարդու համար ստեղծուելիք երանելի վիճակը պատկերել: Ահա այդպիսի պահերից մէկը: Երբ ծագելու լինեն «Աստու Որդու ողորմութեան անստուեր նշոյլներն», այն ժամանակ՝

Տեղի քան իսրութիւնք, նահանջին հեծու՝
Փախնու խաւարն, մեկնի մեզն, [քիւնք,
Մերժի մառախուղն, փարաքի մռայլն,
Սպառի աղջամուղն, վերանայ մութն,
Գնայ զիւրեմն, քարագրի քաղնայն,
Չմանն չարիքն, հալածին յուսահատութիւնքն:

(Քան ԽԱ. — Ա.)

Ոտանաւորն այստեղ վարպետօրէն այնպէս է կառուցուած, որ տպաւորութիւնն ուժեղացնող կուտակումը առաջանում է ամէն մի տողի երկու համարեա նոյնիմաստ հասածներով:

Նարեկացու զգացմունքների ուժից ու խորութիւնից «Ողբերգութեան Մահան» պոէմում ծնուել են նաեւ ահագին քանակութեամբ բանաստեղծական հիպերբոաներ, որոնք նոյնպէս իրենց կարեւոր աեղն ունեն պոէմի արտայայտական մտայնացումների մէջ: Նարեկացին չափազանցութիւններ է գիմում առանձնապէս այն դէպքերում, երբ իր գործած մեղքերի սոսկալի քանակի և դրա հետեանքով իր ապրած ահաւոր ողբերգութեան մասին է ուզում պատկերացում տալ: Ահա մեղքերի չափութեան մի չափազանցութիւն՝ պատկեր:

Նա՛ զի երէ զմայրս Լիբանանու ի մի լուծ
կեռոց զօղեցից,
Եւ կամ զլեռն Արարսեան ի կէտ ամբարձման
նժարի միոյ արդարութեան միջնորդ
կացուցից,
Այ հաւասարէ այնք հարբութեան համազու
գակցել:

(Քան Խ. — Ա.)

Ահա և դրանից առաջացող ողբերգութեան մեծութեան մի չափազանցութիւն՝ պատկեր:

Զի երէ զլոբեք վհակեան առաջս զեռոց
յորդանոսման ծաւալմանց,
Որ զեղեմ եւ զերկիր առհասարակ ոռոգանեն՝
Լիապէս բաւականութեամբ բաշխեալ ամե
նայնի,
Եւ զբխումն ելից իւրեանց առ աչս իմ եղեալ,
Զանձինս մեղաց սասկուրեան զբոց զով
ցուցանել ոչ բաւականացին:

(Քան ԽԴ. — Ա.)

Երկու դէպքում էլ այս չափազանցութիւնները, որոնք դարձեալ կառուցուած են առարկայական շօշափելի արտայայտութիւններով, շնորհիւ պոէմի ընդհանուր բովանդակութեան բնոյթի, ընթերցողին միանգամայն բնական են թւում: Բանաստեղծը բոլոր դէպքերում էլ իր գործածած չափազանցութիւններով ուժեղ զեղարուեստական տպաւորութիւն է առաջացնում և համակում է ընթերցողին իր ապրումներով:

(Շարունակելի՝ 12)

Մ. ՄԿԻՄԱՆ